Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
դեկտեմբերի 13-ի նիստի N 50
արձանագրային որոշման

Ամփոփ հաշվետվություն

50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) 2011 թվականի գործունեության նկատմամբ հսկողության իրականացման արդյունքների մասին

I. Վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) գործունեության ամփոփ արդյունքները 2011 թվականին

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (այսուհետ՝ լիազորված մարմիններ) կողմից ներկայացված տեղեկատվության, Հայաստանի Հանրապետությունում առկա 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ թվով 397 առևտրային կազմակերպություններից 347-ում գործել են վերստուգող հանձնաժողովներ (վերստուգողներ), որոնցից 163-ը՝ վճարովիության սկզբունքով, որոնք համատեղության կարգով վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) գործառույթներ են իրականացրել ևս 130 ընկերություններում, իսկ 62 ընկերություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունները դրվել են լիազորված մարմինների աշխատակազմերից և ընկերություններից նշանակված 30 աշխատակիցների վրա (աղյուսակ 1):

Ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ հաշվետու տարում կատարված 2161 ստուգումների արդյունքում բացահայտվել է 273662.0 հազ. դրամի ֆինանսական խախտում, գույքագրման արդյունքներով՝ 2585.0 հազ. դրամի ավելցուկ և 2112.1 հազ. դրամի պակասորդ: Արձանագրված գումարներից վերականգնվել է 59093.8 հազ. դրամը (աղյուսակ 2):

II. Վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) գործունեության համապատասխանությունը հաստատված աշխատանքային ծրագրերին և ՀՀ ֆինանսների նախարարի 26.06.2009թ. N598-Ա հրամանի պահանջներին, ներկայացված հաշվետվությունների և եզրակացությունների ուսումնասիրության արդյունքում բացահայտված թերությունները և կատարված ստուգումներն ու դրանց արդյունքներն ըստ լիազորված մարմինների համակարգերի

ՀՀ կառավարության աշխատակազմ

Համակարգի թվով 2 բաժնետիրական ընկերություններում գործել են վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով:

Վերստուգողների կողմից իրականացվել է 7 ստուգում:

Խախտումներ չեն արձանագրվել:

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ

Ընկերությունում գործել է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով: Հաշվետու ժամանակահատվածում վերստուգողի կողմից իրականացվել է 2 ստուգում:

Խախտումներ չեն արձանագրվել:

2011թ. գործունեության մասին եզրակացությունը կազմելիս ընկերության վերստուգողը չի առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարի 26.06.2009թ. N598-Ա հրամանով հաստատված «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացության կազմման» մեթոդական ուղեցույցով (այսուհետ՝ մեթոդական ուղեցույց):

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 17.08.2012թ. N02/25/11606-12 գրությամբ ներկայացվել է նոր եզրակացություն, որը համապատասխանեցված է մեթոդական ուղեցույցի պահանջներին:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ

Ընկերությունում գործել է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով:

Վերստուգողի եզրակացությունը համապատասխանում է մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Վերստուգողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 5 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

Կատարված ստուգումների արդյունքում առաջարկվել է՝

- վերանայել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ֆինանսական հաշվետվությունները միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու առումով,
- վերանայել էլեկտրոնային ստորագրությունների տրամադրման պայմանագրերը, հստակեցնել ծառայություն ստացողի և վճարում կատարողի մասին պայմանագրային դրույթները,
- ապրանքանյութական արժեքների մուտքի և ելքի գործընթացը կազմակերպելու համար վարել հաշվառում, սահմանել տվյալ գործառույթն իրականացնող պատասխանատու անձ, ապրանքանյութական արժեքները աշխատակիցներին տրամադրել պահանջագիր-ստացականների հիման վրա,
- առհաշիվ գումարներով գործառնություններ իրականացնելիս պահպանել ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1408-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, գումարների ծախսման վերաբերյալ հաշվետվությունները լրացնել սահմանված ձևին համապատասխան, պահպանել դրանց ժամկետային սահմանափակումները,
- ընկերության կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումն իրականացնելիս բացառապես առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով,
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի և ընկերության կանոնադրության 25-րդ կետի համաձայն ապահովել ընկերության պահուստային կապիտալի ավելացումն ընկերության շահույթի հաշվին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Համակարգի **««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն»** ՓԲԸ-ում գործել է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով:

Վերստուգողի կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացությունը սահմանված ժամկետին չի ներկայացվել (տրամադրվել է ընկերության 21.08.2012թ. NԵ2012-703 գրությամբ՝ ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2012թ. N3/5.1-5/10795-12 շրջաբերական գրության): Ներկայացված եզրակացությունը համապատասխանում է մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 4 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ առողջապահության նախարարություն

Համակարգում առկա 20 ընկերություններից 12-ում գործել են 12 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով:

ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 44 ստուգում: Արձանագրվել է 94842.1 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 964.0 հազ. դրամ, նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 93878.1 հազ. դրամ:

Գույքագրման արդյունքներով բացահայտվել է 22.7 հազ. դրամի պակասորդ, որն ամբողջությամբ վերականգնվել է:

«Ա. Վ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ինստիտուտ», «Պրոֆեսոր Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն», «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» և **«Սևանի հոգեբուժական հիվանդանոց»** ՓԲԸ-ների վերստուգողները չեն առաջնորդվել եզրակացության կազմման մեթոդական ուղեցույցի պահանջներով:

«Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - գույքագրման արդյունքներով բացահայտված պակասորդ՝ 13.4 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 13338.0 հազ. դրամ:

«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 25910.0 հազ. դրամ:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 964,0 հազ. դրամ, նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 33788.1 հազ. դրամ, գույքագրման արդյունքներով բացահայտված պակասորդ՝ 9.3 հազ. դրամ: Արձանագրված պակասորդը՝ 9.3 հազ. դրամը վերականգնվել է:

«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 20842.0 հազ. դրամ:

ՀՀ արդարադատության նախարարություն

Համակարգի միակ՝ «**Պաշտոնական տեղեկագիր»** ՓԲԸ-ում գործել է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով: Վերստուգողի եզրակացությունը համապատասխանում է մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Վերստուգողի կողմից իրականացվել է 6 ստուգում:

Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Համակարգի **«Հատուկ լեռնափրկարար ծառայություն»** և **«Տեղեկատվական ապահովման ազդարարման կենտրոն»** ՓԲԸ-ներում գործել է 1 վերստուգող հանձնաժողով, որի անդամները լիազորված մարմնի աշխատակազմի աշխատակիցներ են:

Ներկայացված եզրակացություններում վերստուգող հանձնաժողովն առաջնորդվել է մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Վերստուգող հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 2 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Համակարգի **«Զվարթնոց» ԱՕԿ** ՓԲԸ-ում գործել է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով: Վերստուգողի եզրակացությունը համապատասխանում է մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Վերստուգողի կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 5 ստուգում: Ստուգումների արդյունքում արձանագրվել է 545.0 հազ. դրամի խախտում՝ նախահաշվից ավելի կատարված ծախսեր:

Արձանագրվել են նաև թերություններ, որոնք չեն հանգեցրել գումարային խախտումների: Մասնավորապես.

- ներկայացուցչական ծախսերը, ինչպես նաև ընկերության կարիքները հոգալու համար առհաշիվ գումարների ծախսումները կատարվել են առանց նախապես հաստատված նախահաշիվների,
- առանձին դեպքերում ընկերության աշխատակիցների պարգևատրումը կատարվել է առանց լիազորված մարմնի հետ համաձայնեցման,
- կրեդիտորական պարտքերի գծով փոխադարձ հաշվարկների ակտեր չեն կնքվել,
- դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստներ չեն ձևավորվել:

Վերստուգողի կողմից ընկերությանն առաջարկվել է.

- մշակել և հիմնադրի հաստատմանը ներկայացնել ընկերության կառավարման մարմնի գործունեությունը կարգավորող ներքին փաստաթղթեր, բացառել առանց լիազոր մարմնի համաձայնության աշխատակիցներին պարգևավճարներ տրամադրելը,
- հնարավորինս նվազեցնել փաստացի ծախսերի շեղումը նախահաշվով հաստատված ծախսերից,
- համապատասխան միջոցներ ձեռնարկել դեբիտորական պարտքերի ծավալը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Արձանագրվել է նաև, որ՝

- նախորդ ստուգումների արդյունքներով կազմված եզրակացություններում արձանագրված խախտումները ամբողջությամբ վերացվել են,
- բաժնետերերի ընդհանուր ժողովը ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնելու որոշում չի կայացրել,
- ապահովվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ պահուստային հիմնադրամի չափի վերաբերյալ, որն իրականացվել է վերստուգողի նախորդ ժամանակահատվածի՝ պահուստային հիմնադրամի համալրում կատարելու մասով առաջարկությամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Համակարգի թվով 16 բաժնետիրական ընկերություններից 15 ընկերություններում գործել է նախարարության աշխատակազմի աշխատակիցներից ձևավորված վերստուգող հանձնաժողով, իսկ 1 ընկերությունում՝ **«Գյումրիի սելեկցիոն կայան»** ՊՓԲԸ-ում, գործել է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով:

Վերստուգող հանձնաժողովի և վերստուգողի կողմից հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր հաշվով կատարվել է 19 ստուգում:

Խախտումներ չեն արձանագրվել:

«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ

Վերստուգողի կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 4 ստուգում:

Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Ագրոսպասարկում», **«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն», «Արագածոտնի ԳԱՄԿ», «Արարատի ԳԱՄԿ», «Արմավիրի ԳԱՄԿ», «Գեղարքունիքի ԳԱՄԿ», «Լոռու ԳԱՄԿ», «Կոտայքի ԳԱՄԿ», «Շիրակի ԳԱՄԿ», «Սյունիքի ԳԱՄԿ», «Վայոց Ձորի ԳԱՄԿ», «Տավուշի ԳԱՄԿ», «Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայան», «Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան»** և **«Մարտունու գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան»** ընկերություններում նախարարության աշխատակազմի աշխատակիցներից ձևավորված վերստուգող հանձնաժողովի կողմից կատարվել է 1-ական ստուգում: Գրեթե բոլոր ընկերություններում արձանագրվել են միանման թերություններ, որոնք չեն հանգեցրել գումարային խախտումների: Մասնավորապես.

- ընկերությունների կողմից կնքված պայմանագրերում և ներքին շրջանառվող իրավական ակտերում առկա են տեխնիկական թերություններ,
- բացակայում են նյութական պատասխանատու անձանց հետ նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագրերը,
- բացակայում են դեբիտորներների և կրեդիտորների հետ փոխադարձ հաշվարկի ակտերը,
- առանձին դեպքերում խախտվել են ՀՀ կառավարության 08.10.2003թ. N1408 որոշման 17-րդ կետի (դրամարկղային գրքում ջնջումներ և առանց ծանոթագրության ուղղումներ կատարելը) և 18-րդ կետի պահանջները (դրամարկղային գրքում գրանցումների կատարման կարգը և ժամկետները),
- մեկ դեպքում էլ բացակայել է ընկերության կողմից վարվող հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը:

Համակարգի գյուղատնտեսության աջակցության թվով 9 մարզային կենտրոններում նախորդ տարվա ստուգումների արդյունքում արձանագրված՝ ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարի (հաշվապահական հաշվեկշիռ, տող 240) և ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի տարածքային բաժիններում գրանցված հիմնադիր փաստաթղթերում նշված կանոնադրական կապիտալի մեծությունների միջև անհամապատասխանությունները հաշվետու տարում վերացվել են:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Համակարգի 8 ընկերություններից 6-ում գործել են վերստուգողներ՝ 3-ը՝ վճարովիության սկզբունքով, 2-ում՝ լիազորված մարմնի աշխատակազմից նշանակված աշխատակիցներ, 1-ում՝ ընկերության աշխատակազմից նշանակված աշխատակից, որոնց կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 43 ստուգում :

Արձանագրվել է 27861.0 հազ. դրամի խախտում՝ նախահաշվից ավելի կատարված ծախսեր: Գույքագրման արդյունքներով բացահայտվել է 88.1 հազ. դրամի պակասորդ:

Արձանագրված գումարներից վերականգնվել է 201.0 հազ.դրամը:

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի վերստուգողը հաշվետվության մեջ նշել է, որ աշխատողների աշխատավարձն ընկերության կողմից որոշ ամիսներ վճարվել է ուշացումով (ընթացիկ ամսվա աշխատավարձը վճարվել է հաջորդ ամսվա 16-ից 25-ն ընկած ժամանակահատվածում), սակայն նշված չէ՝ օրենսդրությամբ նախա-

տեսված տույժերը կիրառվել են, թե՝ ոչ (բացակայում է տեղեկատվությունը տույժերի հաշվարկման վերաբերյալ):

Խախտումները՝ նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 7401.0 հազ. դրամ:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Խախտումները՝ նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 20460.0 հազ. դրամ, որից փաստացի վերականգնվել է 201.0 հազ. դրամը:

«Ոսկերչական գործարան» ՓԲԸ

Խախտումները՝ գույքագրման արդյունքում հայտնաբերված պակասորդ – 88.1 հազ. դրամ, որն ըստ վերստուգողի ձևակերպվել է որպես արտադրության նորմատիվային անվերադարձ կորուստ:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Համակարգի 15 ընկերություններից (ներառյալ՝ «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ն) 3-ում գործել են վերստուգող հանձնաժողովներ (դրանցից 1-ը՝ վճարովիության սկզբունքով), 10-ում՝ 9 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով (դրանցից 1-ը՝ համատեղության կարգով), իսկ «Ընդունելությունների տուն» ՓԲԸ-ում՝ վերստուգողի պարտականություններն իրականացրել է նախարարության աշխատակիցը: Ընդ որում, 50 տոկոս պետական մասնակցությամբ «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» և «Մեծամորէներգոատոմ» ՓԲԸ-ների վերստուգող հանձնաժողովներում ընդգրկված են հայկական կողմի երկուական ներկայացուցիչ: Պայմանավորված այն հանգամանքով, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հանձնված է հավատարմագրային կառավարման (ֆինանսական կառավարումն իրականացվել է հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա), ուստի վերստուգող նշանակվել է ընկերության հավատարմագրային կառավարչի կողմից:

Վերստուգողների եզրակացությունները համապատասխանում են մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 68 ստուգում:

Հաշվետու տարվա ընթացքում, ի կատարումն ՀՀ կառավարության 20.12.2007թ. նիստի N51 արձանագրության 25-րդ հարցի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի հանձնարարականների, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից պարբերաբար (եռամսյակային կտրվածքով) տեղեկատվություն է ներկայացվել հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ:

Համակարգի ընկերություններից 6-ում («Երևանի ՋԷԿ», «Ընդունելությունների տուն», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում», «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» և «Մեծամորէներգոատոմ» ՓԲԸ-ներում) չի ապահովվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և չի ձևավորվել պահուստային հիմնադրամ:

2011թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայգազարդ» և «Մեծամորէներգոատոմ» ՓԲԸ-ների մոտ առկա են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության հիմքերը, ինչը պահանջում է օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցների ձեռնարկում:

Վերստուգողների կողմից հաստատվել են համակարգի ընկերությունների 2011թ. ֆինանսական հաշվետվություններում և հաշվեկշռում նշված տեղեկությունների հավաստիությունը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ընկերության բաժնետոմսերը ՀՀ կառավարության 04.12.2008թ. N1411-Ա որոշմամբ հավատարմագրային կառավարման են հանձնվել ՌԴ «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ՓԲԸ-ին: ՀՀ կառավարության 19.05.2005թ. N1187 որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով (ՀՀ կառավարության 13.05.2010թ. N528-Ն որոշման խմբագրությամբ) սահմանվել է, որ ՀՀ կառավարության 19.05.2005թ. N1187 որոշումը չի տարածվում 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ այն բաժնետիրական ընկերությունների վրա, որոնց կառավարումն իրականացվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

Արձանագրվել են այլ թերություններ, որոնք չեն հանգեցրել գումարային խախտումների:

Բնականոն գործունեության ընթացքում ընկերությունը հակված է տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված ռիսկերին:

Ընկերությունը չունի նշանակալի պարտքային ռիսկերի կենտրոնացում:

Ուսումնասիրելով նախորդ տարիների վնասի ձևակերպման ճշտությունը՝ վերստուգողը նշել է, որ 2010թ. գործունեության արդյունքով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի զուտ շահույթը (շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո) կազմել է 863515.0 հազ. դրամ՝ նախկինում ներկայացված 268004.0 հազ. դրամ վնասի փոխարեն:

«Հայգազարդ» ՓԲԸ

Արձանագրվել է, որ ընկերության հարկային պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ (կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր) 01.01.2012թ. դրությամբ կազմել են 78043950.0 հազ. դրամ, որի գերակշիռ մասն իրավահաջորդությամբ փոխանցվել է էներգահամակարգի նախկին ընկերություններից: Ֆինանսական միջոցների սղության պատճառով ընկերությունը 2011թ. ընթացքում հնարավորություն է ունեցել մարելու միայն ընթացիկ հարկային պարտավորությունները:

Ընկերության կուտակված վնասը կազմում է 98068650.0 հազ. դրամ:

«Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ

ՀՀ կառավարության 04.11.2010թ. N1455-Ն որոշմամբ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությամբ ևս իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված կանոնադրական կապիտալում պետական բաժնեմաս ունեցող իրավաբանական անձանց անվանացանկում ընկերության վերադաս մարմին է նշված ՀՀ պաշտպանության նախարարությունը), սակայն ընկերության վերստուգողի 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացությունը տրամադրվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից:

Ընկերությունում կատարվել է 4 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Արձանագրվել է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի խախտում՝ նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին

հաշվետվություն չներկայացրած անձանց կրկին տրվել են կանխիկ գումարներ: Ընկերության տնօրինությանը առաջարկվել է՝ հետագայում բացառել նման խախտումները:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Անալիտիկ» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Արձանագրվել են թերություններ, որոնք չեն հանգեցրել գումարային խախտումների: Մասնավորապես.

- հաշվապահական հաշվառման իրականացումն ապահովված չէ հաշվապահական ծրագրով,

- նախահաշվից շեղումը (9079.0 հազ. դրամ) չի գնահատվել որպես դրամական միջոցների գերածախս՝ եկամուտների աճի առաջանցիկ տեմպերի առկայության պատճառաբանությամբ:

«Ընդունելությունների տուն» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 4 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Արձանագրվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նորմերի խախտում՝ 3.5 հազ. դրամ: Արձանագրված գումարը փաստացի վերականգնվել է:

«Էներգակարգաբերում» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

«Հայատոմ» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

Ընկերությունը դասվում է այն ընկերությունների շարքին, որոնցում տարիներ շարունակ շահույթ կամ վնաս չի ձևավորվում (ընկերության ողջ հասույթը բյուջետային ֆինանսավորմամբ է ձևավորվում):

«Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Մեծամորէներգոատոմ» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 5 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Համակարգի թվով 5 ընկերություններից 3-ում գործել են 2 վերստուգողներ, 1-ը՝ համատեղության կարգով: **«Նոր Նորքի ուսանողական ավան»** և **«Էկրան»** ՓԲԸ-ները գտնվում են լուծարման գործընթացում:

Վերստուգողների եզրակացությունները համապատասխանում են մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Վերստուգողների կողմից կատարվել է 35 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 7 ստուգում:

Վերստուգողի կողմից արձանագրվել է, որ.

- հաշվետու տարվա եկամուտների-ծախսերի նախահաշիվը և կատարողականը կազմվել են միայն տարվա կտրվածքով, ընդ որում, կատարողականը կազմվել է 2012թ.

մայիս ամսին, ըստ այդմ՝ վերահսկման համար իր նպատակին չի ծառայել (ընկերության կողմից դա պատճառաբանվել է աշխատանքների մեծ ծավալներով),

- ընկերության հաշվապահության կողմից 2011թ. հաշվետու տարվա գույքագրման աշխատանքները դեռ չավարտված և չամփոփված, կազմվել են 2011թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին չի համապատասխանում, ըստ այդմ՝ հաշվեկշիռն արժանահավատ չի ճանաչվում:

Վերստուգողի կողմից առաջարկվել է՝ քննարկել և միջոցներ ձեռնարկել ընկերության համակարգչային հաշվապահական ծրագիրը համապատասխան սպասարկող կազմակերպության կողմից վերանայելու և արդիական հաշվապահական ծրագրերի հնարավորություններով այն հագեցնելու ուղղությամբ:

«Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 14 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

Ընկերությունը դասվում է այն ընկերությունների շարքին, որոնցում տարիներ շարունակ շահույթ կամ վնաս չի ձևավորվում: 2011թ. ընթացքում ընկերության ծախսերը աճել են հատկացումների չափով:

Արձանագրվել է նաև, որ ակտիվների և պարտավորությունների վերջին գույքագրումը կատարվել է 2009թ., իսկ հաշվետու ժամանակահատվածում կատարվել է միայն ընթացիկ ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

Ընկերությունում արտաքին աուդիտ չի իրականացվել և պահուստային հիմնադրամ չի ձևավորվել:

««Կրթություն» թերթի խմբագրություն» ՓԲԸ

Ընկերությունում կատարվել է 14 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

Ընկերության գործադիր մարմնին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել՝

- լուծելու նախորդ տարիներին գոյացած և հաշվեկշռից հաշվեկշիռ շարունակաբար փոխանցվող պարտքերի հարցը (վաճառքի գծով դեբիտորական՝ 1073.4 հազ. դրամի և աշխատավարձի գծով կրեդիտորական՝ 462.6 հազ. դրամի չափով),

- ապահովելու ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. N102 հրամանով հաստատված կարգի պահանջների կատարումը և 2012թ. կատարել ակտիվների և պարտավորությունների ընդհանուր գույքագրում՝ ընդգրկելով նաև հիմնական միջոցները, քանի որ նման գույքագրում վերջին անգամ իրականացվել է 2008թ., իսկ 2011թ. կատարվել է միայն ընթացիկ ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

ՀՀ մշակույթի նախարարություն

Համակարգի **«Հուշարձանների վերականգնման կենտրոն»** ՓԲԸ-ում գործում է 1 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով: Վերստուգողի կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացություն և հաշվետվություն չի ներկայացվել, թեև ՀՀ մշակույթի նախարարի 19.03.2012թ. N01/15.1/1020-12 գրությամբ տեղեկացվել է, որ ընկերությունում վերստուգողը գործում է 2011 թվականի հոկտեմբերից:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարի 18.08.2012թ. N3/5.1-5/10795-12 շրջաբերական գրության՝ ՀՀ մշակույթի նախարարի 23.08.2012թ. N01/15/3409-12 գրությամբ տեղեկացվել է, որ ընկերության վերստուգողի պայմանագրի ժամկետի լրանալուց հետո (2011թ. դեկտեմբեր) վերստուգողի հետ նոր պայմանագիր չի կնքվել:

Համակարգի 13 ընկերություններից 11-ում գործել են վերստուգողներ, որոնցից 10-ը՝ վճարովիության սկզբունքով (1-ը՝ համատեղության կարգով):

ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող ընկերությունների վերստուգողների կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացություններ և հաշվետվությունները սահմանված ժամկետում չեն ներկայացվել (բացառությամբ՝ ***«Արմենիկում»*** ՓԲԸ-ի վերստուգողի): Վերջինիս վերստուգողի կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 10 ստուգում: Արձանագրվել է 16944.6 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 2743.0 հազ. դրամ, ոչ նպատակային ծախսեր՝ 1708.8 հազ. դրամ, ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 12492.8 հազ. դրամ:

Արձանագրված խախտումներից փաստացի վերականգնվել է 2743.0 հազ. դրամը:

Համաձայն վերստուգողի կողմից ներկայացված հաշվետվության՝ ընկերության դրամարկղային գործառնություններն իրականացնելիս որոշ դեպքերում չեն պահպանվում «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները: Գնումները չեն կատարվում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի: Ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

«Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ-ի վերստուգողի 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացությունը տրամադրվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից (տես՝ սույն հաշվետվության համապատասխան հատվածը, էջ 10):

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարի 18.08.2012թ. N3/5.1-5/10795-12 շրջաբերական գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարի 01.09.2012թ. ՊՊՆ/510-1311 գրությամբ ներկայացվել է նախարարության ենթակայության մյուս 10 ընկերություններից թվով միայն 7-ի վերստուգողների եզրակացությունները և 4-ի հաշվետվությունները: «ԵրՄՄԳ», «65 Ռազմական գործարան» և «Հենակետ» ՓԲԸ-ների վերստուգողների կողմից չեն ներկայացվել ՀՀ կառավարության 21.11.2003թ. N1923-Ն որոշման N2 հավելվածի համաձայն կազմված հաշվետվությունները (2011թ. կատարված ստուգումների և հայտնաբերված խախտումների վերաբերյալ):

Ըստ ներկայացված հաշվետվությունների՝ վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 31 ստուգում:

Վերոնշյալ գրությամբ տեղեկացվում է նաև, որ **«Արմենիկում»** ՓԲԸ-ի վերստուգողի կողմից ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել 2 տարբեր եզրակացություն (ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա է դրանցից մեկը միայն, որին կից հաշվետվության համաձայն, ինչպես նշվել է վերևում, արձանագրվել է 16944.6 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 2743.0 հազ. դրամ, ոչ նպատակային ծախսեր՝ 1708.8 հազ. դրամ, ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 12492.8 հազ. դրամ, իսկ արձանագրված խախտումներից փաստացի վերականգնվել է 2743.0 հազ. դրամը): Այդ կապակցությամբ ներկայացվել է նաև ընկերության պետական բաժնեմասի լիազոր ներկայացուցչի տեղեկանքը և հաշվետվության մեկ այլ տարբերակ (համաձայն որի ընկերության խախտումները կազմել են ընդամենը 157.0 հազ. դրամ՝ փաստաթղթով չհիմնավորված ծախսեր և արձանագրված գումարը չի վերականգնվել), ինչպես նաև ինչ-ինչ պարզաբանումներ եզրակացությունների և հաշվետվությունների 2 տարբերակների տարբերությունների վերաբերյալ (եզրակազության 2-րդ տարբերակը ՀՀ ֆինանսների նախարարություն չի ներկայացվել): Մասնավորապես նշվում է, որ եզրակացությունների 2 տարբերակներում հաշվեկշռին վերաբերվող դատողությունները բացարձակապես նույնն են, սակայն երկրորդ տարբերակում ի հայտ են եկել «Արմենիկում»

ՓԲԸ-ի ղեկավարությանը քննադատող մի շարք պնդումներ: Դրանք արտացոլված են այդ տարբերակի 2.3, 2.4 և 8-րդ կետերում: Ըստ այդմ.

- 2.3 կետում նշված է, որ ՓԲԸ-ի տնօրենը 25 օրով մեկնել է գործուղման ք. Կիև, որի ծախսերը կազմել են 1780.8 հազ. ՀՀ դրամ և հաշվարկը կատարվել է ըստ կարգի: եզրակացության մյուս տարբերակում նշվում է, որ բացակայում է գործուղման վերաբերյալ հաշվետվությունը:

- 2.4 կետում նշվում է, որ 2011թ. քաղաքացիների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ վերանորոգման աշխատանքների համար: Այս հարցի առթիվ ստեղծվել է հանձնաժողով: Ընկերության վերստուգողն իր անհամաձայնությունն է արտահայտել, որ թերությունների և կատարման ակտերի տակ կան հանձնաժողովի անդամների ստորագրությունները, իսկ վճարման ակտի տակ միայն տնօրենի, գլխավոր հաշվապահի և ստացողի ստորագրություններն են: Այս հարցի կապակցությամբ նշվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ձեռնարկության ղեկավարումը վերադասի կողմից հանձնված չէ ինչ-որ հանձնաժողովի տնօրինությանը, ապա ֆինանսների դուրս գրման փաստաթղթերը ստորագրվում են տնօրենի, գլխավոր հաշվապահի և գումարները ստացողի կողմից:

- նույն 2.4 կետում ավելացվել է մի փաստ, ըստ որի 2010թ. ելքագրվել է 2743.0 հազ. ՀՀ դրամի աշխատավարձ, որը նախորդ տարիներին չվճարված աշխատավարձի գումարներից է: Սոցիալական վճարների և եկամտահարկի գումարների բացակայության պատճառով այդ գումարը 2011թ. մայիսին ետ է մուտքագրվել դրամարկղ:

- 8-րդ կետով վերստուգողն առաջարկել է ընկերության ճաշարանի գործունեությունը ներառել հարկային դաշտում, սակայն բացակայում է առաջարկության հիմնավորումը:

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ

Արձանագրված խախտումները – ընկերությանը հասցված նյութական վնաս՝ 11.4 հազ. դրամ, անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 213.0 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր՝ 1931.6 հազ. դրամ, գույքագրման արդյունքներով բացահայտված պակասորդ՝ 107.0 հազ. դրամ և ավելցուկ՝ 2501.0 հազ. դրամ:

Արձանագրված խախտումներից փաստացի վերականգնվել է 2736.2 հազ. դրամը:

«Զինառ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – այլ խախտումներ՝ 3403.1 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Համակարգի 3 ընկերությունում գործել են 3 վերստուգող՝ վճարովիության սկզբունքով: Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 6 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

Գործել է մեկ վերստուգող (**«Հանրակացարաններ»** ՓԲԸ-ում), որի պարտականություններն իրականացրել է լիազորված մարմնի աշխատակազմից նշանակված աշխատակիցը: Վերստուգողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 3 ստուգում:

Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

Համակարգի 6 ընկերություններից 2-ում գործել են վերստուգողներ՝ երկուսն էլ վճարովիության սկզբունքով, որոնց կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 20 ստուգում:

Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

«Հայավտոկայարան» ՓԲԸ

Վերստուգողը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է 16 ստուգում:

Արձանագրված խախտումները - նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 10658.0 հազ. դրամ, ոչ նպատակային ծախսումներ՝ 3068.0 հազ. դրամ, փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 1595.0 հազ. դրամ, ընկերությանը հասցված նյութական վնաս՝ 126.0 հազ. դրամ:

Արձանագրված գումարներից վերականգնվել է 126.0 հազ. դրամը:

«Վարչա-տնտեսական» ՓԲԸ

Վերստուգողը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է 4 ստուգում:

Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Համակարգի **«Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ»** ԲԲԸ-ում գործել է 1 վերստուգող՝ նշանակված լիազորված մարմնի աշխատակազմից: Վերստուգողի կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացություն և հաշվետվություն չի ներկայացվել, քանի որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. օգոստոսի 17-ի թիվ 181-Ա/2 հրամանի համաձայն նա ազատվել է աշխատանքից և 2011թ. նշված պաշտոնում նոր նշանակում չի եղել:

ՀՀ ֆինանսների նախարարություն

Համակարգի **«**«**Էկոնոմիկա**» **հանդես»** ՓԲԸ-ի՝ նախարարության աշխատակազմի աշխատակիցներից ձևավորված վերստուգող հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 ստուգում:

Խախտումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Համակարգի **«Հարկային տեղեկատու»** ընկերությունում գործել է 1 վերստուգող հանձնաժողով՝ կազմված լիազորված մարմնի աշխատակազմի աշխատակիցներից:

Ներկայացված եզրակացությունում վերստուգող հանձնաժողովն առաջնորդվել է մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Վերստուգող հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 1 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն

Համակարգի 31 ընկերություններից 28-ում գործել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի 19.01.2007թ. N08-Ա հրամանով ստեղծված ընդամենը 1 վերստուգող հանձնաժողով, որի անդամների պարտականությունները կատարել են լիազորված մարմնի աշխատակազմից նշանակված 3 աշխատակից: ***«Երևանի ջրամատակարարման ուղեմաս», «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության***

ԳՀԻ» և ***«Գեոէկոնոմիկա»*** ընկերություններում գործել են մրցութային կարգով ընտրված և նշանակված վերստուգողներ (երեքն էլ վճարովիության սկզբունքով):

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության 29.06.2012թ. N01/14.14/3313-12 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության 21.11.2003թ. N1923-Ն որոշմամբ հաստատված N2 հավելվածի ձևով կազմված հաշվետվությունները, որոնց համաձայն վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 50 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողների) կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացություններ չեն ներկայացվել:

Աշխատանքային ծրագրով նախատեսված ստուգումներ իրականացվել են 26 ընկերություններում, իսկ հետևյալ 5 ընկերություններում ստուգումներ չեն իրականացվել, քանի որ՝

- **«Արտագերատեսչական փորձաքննություն»** ՓԲԸ-ի բաժնետոմսերը մասնավորեցվել են ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1879-Ն որոշմամբ,
- **«Ավտոտրանսպորտի» և «Էկոսերվիս»** ՓԲԸ-ները լուծարման գործընթացում են (դրանց լուծարման վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը),
- **«Արուճի սերմնաբուծական պետական» և «Կապուտակ»** ՓԲԸ-ները 2011թ. գործունեություն չեն ծավալել (չունեն տնօրեններ):

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն

Համակարգի 3 ընկերություններից 1-ում վճարովիության սկզբունքով գործել է 1 վերստուգող հանձնաժողով՝ 3 անդամով, ինչպես նաև՝ 2 վերստուգողներ: Վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 15 ստուգում:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 2790.3 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության պետական կոմիտե

Համակարգում գործում է 1 վերստուգող հանձնաժողով, որը կազմված է ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության պետական կոմիտեի աշխատակազմի և ընկերության աշխատակիցներից:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ընկերությունում կատարվել է 1 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել: Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը համապատասխանում է մեթոդական ուղեցույցի պահանջներին:

Վերստուգող հանձնաժողովի կողմից ընկերության գործադիր մարմնին առաջարկվել է՝ հետևողական լինել դեբիտորական պարտքերը ստանալու հարցում, ձևավորել ժամկետանց դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստներ և կիրառել կնքված պայմանագրերով սահմանված տույժերը՝ անհրաժեշտության դեպքում դիմելով դատարան:

ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

Համակարգի 5 ընկերություններում գործել են 2 վերստուգող (վճարովիության սկզբունքով), որոնք համատեղությամբ վերստուգողի գործառույթներ են իրականացրել նաև մյուս 3 ընկերություններում:

Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 24 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ ոստիկանություն

Համակարգի 2 ընկերություններում գործել են 2 վերստուգողներ, որոնց պարտականություններն իրականացրել են լիազորված մարմնի աշխատակազմից նշանակված աշխատակիցները:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2 ստուգում: Արձանագրվել են օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 56740.6 հազ. դրամ: Արձանագրված գումարներից փաստացի վերականգնվել է 30769.9 հազ. դրամը:

«Կոնտինենտտեքս» ՓԲԸ

Վերստուգողի կողմից արձանագրվել է, որ ընկերությունում՝

- խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջը, որի արդյունքում առաջացել է լրացուցիչ պարտավորության գումար. շահութահարկ՝ 60.0 հազ. դրամ և շահութաբաժին՝ 120.0 հազ. դրամ,
- խախտվել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջը, այն է՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ ակտիվների և պարտավորությունների գույքագրում չի անցկացվել,
- աշխատակիցներին անվճար արձակուրդների և աշխատավարձերի վճարում իրականացնելիս որոշ դեպքերում չեն առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներով,
- գնումները չեն կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Արձանագրված խախտումները - օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 39413.0 հազ. դրամ, որից՝ ժամկետանց դեբիտորական պարտքեր՝ 24764.2 հազ. դրամ, կրեդիտորական պարտքեր՝ 14468.8 հազ. դրամ:

Արձանագրված գումարներից փաստացի վերականգնվել է 30769.9 հազ. դրամը, որից՝ 26119.3 հազ. դրամը առհաշիվ տրված գումարի վերադարձ, 4650.6 հազ. դրամը՝ ժամկետանց դեբիտորական պարտքերի մարում:

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ

Վերստուգողի կողմից արձանագրվել է, որ ընկերությունում՝

- գնումները չեն իրականացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- չեն պահպանվել «Ժամանակավոր աշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Արձանագրված խախտումները - օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 17327.6 հազ. դրամ, որից՝ ժամկետանց դեբիտորական պարտքեր՝ 16430.2 հազ. դրամ, կրեդիտորական պարտքեր՝ 895.5 հազ. դրամ և պակաս վճարված ժամանակավոր անաշխատունակության գումար՝ 1.9 հազ. դրամ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե

Համակարգում առկա 8 ընկերություններում գործել են 8 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 48 ստուգում: Արձանագրվել է 11634.6 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ ընկերությանը հասցված նյութական վնաս՝ 1744.9 հազ. դրամ, նախահաշվից ավել կատարված ծախսեր՝ 8325.0 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր՝ 144.0 հազ. դրամ, ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1477.2 հազ. դրամ: Գույքագրման արդյունքներով բացահայտվել է 80.4 հազ. դրամի ավելցուկ և 7.9 հազ. դրամի պակասորդ:

Արձանագրված գումարներից փաստացի վերականգնվել է 1565.5 հազ. դրամը:

«Նոր Ակունք» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - գույքագրման արդյունքներով բացահայտվել է 8.0 հազ. դրամի ավելցուկ և 7.9 հազ. դրամի պակասորդ, որը փաստացի վերականգնվել է:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 8325.0 հազ. դրամ:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ընկերությանը հասցված նյութական վնաս՝ 1744.9 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր 144.0 հազ. դրամ: Գույքագրման արդյունքում բացահայտվել է ավելցուկ՝ 72.4 հազ. դրամ:

«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1477.2 հազ. դրամ, որը փաստացի վերականգնվել է:

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Մարզպետարանի ենթակայության 4 ընկերություններից 3-ում գործել է 1 վերստուգող հանձնաժողով՝ վճարովիության սկզբունքով (***«Աշտարակի ԲԿ» ՓԲԸ-ում***): Միաժամանակ հանձնաժողովի անդամները համատեղության կարգով վերստուգողի պարտականություններ են իրականացրել ևս 3 ընկերություններում՝ ***«Ապարանի ԲԿ»***, ***«Թալինի ԲԿ»*** և ***«Ծաղկահովիտի ԲԿ»*** ՓԲԸ-ներում:

Հանձնաժողովի կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացություններ և հաշվետվություններ չեն ներկայացվել:

Ի պատասխան մեր 10.08.2012թ. N3/5.1-5/10508-12 գրության՝ Արագածոտնի մարզպետարանի 20.08.2012թ. N01/10.2/2651-12 գրությամբ տեղեկացվել է, որ մարզպետարանի ենթակայության ընկերությունների վերստուգողների եզրակացությունները և հաշվետվությունները կքննարկվեն մարզպետարանում և կներկայացվեն ՀՀ ֆինանսների նախարարություն, ինչը մինչ օրս չի կատարվել:

ՀՀ Արարատի մարզպետարան

Համակարգում առկա 41 ընկերություններում գործել են 22 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով, վերստուգողի գործառույթներ իրականացնելով ևս 19 ընկերություններում:

Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 160 ստուգում: Խախտումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ Արմավիրի մարզպետարան

Համակարգի 8 ընկերություններից 6-ում գործել են 6 վերստուգողներ՝ բոլորն էլ վճարովիության սկզբունքով:

Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Մարզպետարանի ենթակայության ընկերություններում վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 77 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

Համակարգում առկա 40 ընկերություններում գործել են 12 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով, որոնք վերստուգողի գործառույթներ են իրականացրել ևս 28 ընկերություններում:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 168 ստուգում: Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով: Ընդհանուր առմամբ, համոզիչ չի ներկայանում վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների թվի և դրանց արդյունքում հայտնաբերված խախտումների ու արձանագրված գումարների ծավալների հավաստիությունը՝ և՛ քանակական, և՛ որակական առումներով:

«Սևանի պոլիկլինիկա» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 10.2 հազ. դրամ:

«Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի վերստուգողի կողմից 2011թ. գործունեության վերաբերյալ եզրակացություն և հաշվետվություն չի ներկայացվել, քանի որ ժամկետը լրանալու հիմքով 2012թ. մայիսին վերստուգողի հետ պայմանագիրը լուծվել է:

ՀՀ Լոռու մարզպետարան

Համակարգի 22 ընկերություններից 12-ում գործել են 11 վերստուգողներ՝ բոլորն էլ վճարովիության սկզբունքով, որոնցից 1-ը՝ համատեղության կարգով: ***«Ստեփանավանի ԲԿ»*** ՓԲԸ-ի վերստուգողի կողմից եզրակացություն և հաշվետվություն չի ներկայացվել, իսկ **«Ալավերդու ԲԿ»**, ***«Տաշիրի ԲԿ»***, ***«Դսեղի ԱԿ»***, ***«Լեռնապատի ԱԿ»*** և ***«Վահագնիի ԱԿ»*** ՓԲԸ-ների վերստուգողների լիազորությունները դադարեցվել են (ազատվել են աշխատանքից) պայմանագրի ժամկետի ավարտման հիմքով, հետևաբար նույնպես եզրակացություններ և հաշվետվություններ չեն ներկայացվել:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 83 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

«Վանաձորի ԲԿ», «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա», «Լոռու հոգենյարդաբանական դիսպանսեր», «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց», «Սպիտակի ԲԿ» և «Մարգահովիտի ԱԿ» ՓԲԸ-ների վերստուգողների

կողմից ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

«Վանաձորի ԲԿ», «Մեծ Պարնիի ԱԿ» ՓԲԸ-ների վերստուգողների եզրակացության վերլուծական մասում չի ներկայացվել համապատասխան տեղեկատվություն հաշվեկշռի կառուցվածքի վերլուծության (ընթացիկ իրացվելիության գործակից, սեփական միջոցներով ապահովվածության գործակից) վերաբերյալ:

ՀՀ Կոտայքի մարզպետարան

Համակարգում առկա 35 ընկերություններում գործել են 9 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով, վերստուգողի գործառույթներ իրականացնելով ևս 26 ընկերություններում:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 89 ստուգում: Արձանագրվել է 19277.3 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված ծախս՝ 9.0 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր՝ 498.1 հազ. դրամ, նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 370.3 հազ. դրամ, ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 11197.0 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 7202.9 հազ. դրամ:

Գույքագրման արդյունքներով բացահայտվել են 3.6 հազ. դրամի ավելցուկ և 0.8 հազ. դրամի պակասորդ:

Արձանագրված գումարներից փաստացի վերականգնվել է 244.8 հազ. դրամը

«Հրազդանի ԲԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումներ – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 7382.9 հազ. դրամ:

«Աբովյանի ԲԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումներ – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 10.1 հազ. դրամ (ամբողջությամբ վերականգնվել է):

«Չարենցավանի ԲԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումներ - նախահաշվից ավել կատարված ծախսեր՝ 249.6 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր՝ 498.1 հազ. դրամ, այլ խախտումներ՝ 60.9 հազ. դրամ: Գույքագրման արդյունքներով բացահայտված ավելցուկ՝ 3.6 հազ. դրամ և պակասորդ՝ 0.8 հազ. դրամ:

Արձանագրված գումարներից վերականգնվել է 3.7 հազ. դրամ:

«Բջնիի ԲԱ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 120.7 հազ. դրամ, ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1408.1 հազ. դրամ:

«Արզականի ԲԱ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1347.4 հազ. դրամ:

«Ծաղկաձորի ԲԱ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - նախահաշվից ավելի կատարված ծախսեր՝ 9.0 հազ. դրամ:

«Ալափարսի ԱԱՊԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1048.6 հազ. դրամ:

«Բալահովիտի ԲԱ», **«Արամուսի ԲԱ»** և **«Ջրվեժի ԲԱ»** ՓԲԸ-ների վերստուգողների կողմից չի ներկայացվել ՀՀ կառավարության 21.11.2003թ. N1923-Ն որոշմամբ սահմանված հաշվետվությունը:

«Աբովյանի ծննդատուն» ՓԲԸ-ի (համատեղության կարգով նաև **«Արզնիի ԲԱ», «Ձորաղբյուրի ԱԱՊԿ»** և **«Կոտայքի ԱԱՊԿ»** ՓԲԸ-ներում), **«Նոր Հաճընի պոլիկլինիկա»** ՓԲԸ-ի (համատեղության կարգով նաև **«Քասախի ԱԱՊԿ», «Արագյուղի ԱԱՊԿ»** և **«Նոր Երզնկայի ԱԱՊԿ»** ՓԲԸ-ներում), **«Գառնիի ԱԿ»** ՓԲԸ-ի (համատեղության կարգով նաև **«Գեղաշենի ԱԱՊԿ», «Կապուտանի ԱԱՊԿ»** և **«Զառի ԱԱՊԿ»** ՓԲԸ-ներում) վերստուգողների կողմից 2011թ. իրենց գործունեության վերաբերյալ եզրակացություններ և հաշվետվություններ չեն ներկայացվել:

ՀՀ Շիրակի մարզպետարան

Համակարգի 34 ընկերություններից 33-ում գործել են 12 վերստուգողներ՝ բոլորն էլ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով:

Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 977 ստուգում: Արձանագրվել է 14004.5 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ ոչ նպատակային ծախսեր՝ 10.0 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր՝ 93.2 հազ. դրամ, օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 13901.3 հազ. դրամ:

Արձանագրված խախտումներից փաստացի վերականգնվել է 13943.9 հազ. դրամը:

«Գյուլբեկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – անարդյունավետ ծախսեր՝ 18.6 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1070.2 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 1306.0 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Գյումրու Էնրիկո Մատեեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 9025.5 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Գյումրու Շտապ բուժ. օգնության կայան» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 2013.0 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Ախուրյանի ԲԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ոչ նպատակային ծախսեր՝ 10.0 հազ. դրամ, անարդյունավետ ծախսեր՝ 50.6 հազ. դրամ, օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված նորմերի խախտումներ՝ 486.6 հազ. դրամ:

Արձանագրված գումարներից վերականգնվել է 486.6 հազ. դրամը:

«Ախուրիկի ԲԱ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – անարդյունավետ ծախսեր՝ 24.0 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

ՀՀ Սյունիքի մարզպետարան

Համակարգի 19 ընկերություններից 18-ում գործել են 8 վերստուգողներ՝ բոլորն էլ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով: **«Սիսիանի ԲԿ», «Նորաշենիկի ԱԱՊԿ» և «Անգեղակոթի ԲԱ»** ՓԲԸ-ների վերստուգողների կողմից եզրակացություններ և հաշվետվություններ չեն ներկայացվել, իսկ **«Մեղրու ԲԿ», «Գորայքի ԱԱՊԿ», «Դարբասի ԱԿ»** և **«Բռնակոթի ԱԿ»** ՓԲԸ-ների վերստուգողների կողմից հաշվետվություններ չեն ներկայացվել: Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 38 ստուգում: Արձանագրվել է 566.6 հազ. դրամի խախտում՝ ոչ նպատակային ծախսի տեսքով:

«Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսեր» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – ոչ նպատակային ծախսեր՝ 566.6 հազ. դրամ:

Արձանագրված գումարը վերականգնվել է:

«Գորիսի ԲԿ», «Գորայքի ԱԱՊԿ», «Դարբասի ԱԿ», «Բռնակոթի ԱԿ», «Խնձորեսկի ԱԱՊԿ», «Տեղի ԱԱՊԿ» ՓԲԸ-ների վերստուգողների կողմից կազմված եզրակացությունների վերլուծական մասում չի ներկայացվել տեղեկատվություն կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության, առհաշիվ գումարների ստուգման, հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերաբերյալ:

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան

Համակարգի 9 ընկերություններում գործել են 3 վերստուգողներ՝ բոլորն էլ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով:

Ներկայացված եզրակացություններում վերստուգողներն առաջնորդվել են մեթոդական ուղեցույցի պահանջներով:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 71 ստուգում: Խախտումներ չեն արձանագրվել:

«Հռիփսիմեի ԱԿ» և **«Զառիթափի ԱԱՊԿ»** ՓԲԸ-ների վերստուգողների կողմից ներկայացված եզրակացությունների համաձայն ընկերությունների կողմից տնտեսական ապրանքների, գրենական պիտույքների ձեռք բերման պայմանագրերը կնքվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ (գնումների ընթացակարգի մասով): Ներկայացվել է համապատասխան առաջարկություն:

ՀՀ Տավուշի մարզպետարան

Համակարգում առկա 23 ընկերություններից 20-ում գործել են 10 վերստուգողներ՝ վճարովիության սկզբունքով և համատեղության կարգով, վերստուգողի գործառույթներ իրականացնելով ևս 10 ընկերություններում:

Վերստուգողների կողմից 2011թ. իրենց գործունեության վերաբերյալ եզրակացություններ և հաշվետվություններ են ներկայացրել միայն **«Բերդի ԲԿ», «Խաչթառակի ԱԱՊԿ», «Ազատամուտի ԱԱՊԿ», «Այգեհովտի ԱԱՊԿ»** ՓԲԸ-ների վերստուգողները, **«Նոյեմբերյանի ԲԿ»** ՓԲԸ-ի վերստուգողի կողմից ներկայացվել է միայն ՀՀ կառավարության 21.11.2003թ. N1923-Ն որոշմամբ սահմանված հաշվետվությունը: **«Ոսկեվանի ԲԱ», «Կոթիի ԲԱ», «Հաղարծնի ԱԱՊԿ», «Դիլիջանի ԲԿ», «Աչաջրի Ա/Կ», «Սևքարի ԲԱ», «Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա»** ՓԲԸ-ների վերստուգողների կող-

մից ներկայացվել է միայն 2011թ. չորրորդ եռամսյակի ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները:

Վերստուգողների կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 63 ստուգում:

Արձանագրվել է 7435.6 հազ. դրամի խախտում, այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված ծախս՝ 5550.0 հազ. դրամ, գույքագրման արդյունքներով բացահայտված պակասորդ՝ 1885.6 հազ. դրամ:

Արձանագրված գումարներից վերականգնվել է 5550.0 հազ. դրամ:

«Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները – փաստաթղթերով չհիմնավորված ծախս՝ 5550.0 հազ. դրամ:

Արձանագրված գումարն ամբողջությամբ վերականգնվել է:

«Բերդի ԲԿ» ՓԲԸ

Արձանագրված խախտումները - Գույքագրման արդյունքներով բացահայտված պակասորդ՝ 1885.6 հազ. դրամ:

Արձանագրված գումարից վերականգնում չի եղել:

ՏԵՂԵԿԱՆՔ N1
50 տոկոս և ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) ձևավորման մասին 2011թ.

h/h	ՀՀ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ	Ընկերությունների քանակը, որտեղ գործել են վերստուգող հանձնաժողովներ (վերստուգողներ)	Վերստուգիչներ սկզբունքով գործող վերստուգող հանձնաժողովների անդամների քանակը	Այն ընկերությունների քանակը, որոնցում հանձնաժողովի վիճաբանությունները կամ ամբողջությամբ ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների ավելի մեծ մասով	Վերստուգիչներ սկզբունքով գործող վերստուգողների քանակը	Այն ընկերությունների քանակը, որոնցում վերստուգողները նշանակվել են հասարակության կողմից	Լիազորված մարմնի աշխատակազմից վերստուգող հանձնաժողովների անդամների (վերստուգողների) պարտականություններ իրականացնող աշխատակիցների քանակը	Ընկերությունների աշխատակազմերից վերստուգող հանձնաժողովների անդամների (վերստուգողների) պարտականություններ իրականացնող աշխատակիցների քանակը
1	***ՀՀ կառավարության աշխատակազմ***	2			2			
	ՀՀ նախարարություններ							
2	***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***	1			1			
3	***ՀՀ առողջապահության նախարարություն***	12			12			
4	***ՀՀ արդարադատության նախարարություն***	1			1			
5	***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն***	2					4	
6	***ՀՀ բնապահպանության նախարարություն***	1			1			
7	***ՀՀ գյուղատնտեսության նախարարություն***	16			1		2	
8	***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***	6			3		2	1
9	***ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն***	15	2		9	1	5	
10	***ՀՀ կրթության և գիտության նախարարություն***	3			2	1		
11	***ՀՀ մշակույթի նախարարություն***	0						
12	***ՀՀ պաշտպանության նախարարություն***	11			10	1		
13	***ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն***	3			3			
14	***ՀՀ տարածքային կառավարման նախարարություն***	1					1	
15	***ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն***	2			2			
16	***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***	1					1	
17	***ՀՀ ֆինանսների նախարարություն***	1					3	

	ՀՀ գերատեսչություններ							
18	***ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե***	1					3	
19	***ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն***	31			3		3	
20	***ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն***	3	3		2			
21	***ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության պետական կոմիտե***	1					1	1
22	***ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ***	5			2	3		
23	***ՀՀ ոստիկանություն***	2					2	
24	***ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե***	8			8			
	ՀՀ մարզպետարաններ							
25	***ՀՀ Արագածոտնի մարզպետարան***	4	3	3			1	
26	***ՀՀ Արարատի մարզպետարան***	41			22	19		
27	***ՀՀ Արմավիրի մարզպետարան***	6			6			
28	***ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան***	40			12	28		
29	***ՀՀ Լոռու մարզպետարան***	12			11	1		
30	***ՀՀ Կոտայքի մարզպետարան***	35			9	26		
31	***ՀՀ Շիրակի մարզպետարան***	33			12	21		
32	***ՀՀ Սյունիքի մարզպետարան***	18			8	10		
33	***ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան***	9			3	6		
34	***ՀՀ Տավուշի մարզպետարան***	20			10	10		
	Ընդամենը	347	8	3	155	127	28	2

Աղյուսակ N 2

ՏԵՂԵԿԱՆՔ N2

50 տոկոս և ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում 2011թ.ընթացքում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) կողմից կատարված ստուգումների և հայտնաբերված խախտումների մասին

ՀՀ	**ՀՀ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ**	**Ստուգումների քանակը**	**Հայտնաբերված խախտումների և վերականգնումների ծավալը (հազ. դրամ)**				
			Ընդամենը խախտումներ	**Գումարների վերականգնում**	**Գույքագրման ավելցուկ**	**Գույքագրման պակասուրդ**	**Ոչակասորդի վերականգնում**
1	***ՀՀ կառավարության աշխատակազմ***	7					
	ՀՀ նախարարություններ						
2	***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***	4					
3	***ՀՀ առողջապահության նախարարություն***	44	94842.1			22.7	22.7
4	***ՀՀ արդարադատության նախարարություն***	6					
5	***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն***	2					

6	ՀՀ բնապահպանության նախարարություն	5	545.0				
7	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	19					
8	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	43	27861.0	201.0		88.1	
9	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	68	3.5	3.5			
10	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	35					
11	ՀՀ մշակույթի նախարարություն						
12	ՀՀ պաշտպանության նախարարություն	31	22503.7	8882.3			
13	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	6					
14	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	3					
15	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	20	15447.0	126.0			
16	ՀՀ քաղաքաշինության նախարարություն						
17	ՀՀ ֆինանսների նախարարություն	1					
	ՀՀ գերատեսչություններ						
18	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	1					
19	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	50					
20	ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	15	2790.3	2790.3			
21	ՀՀ միջուկային անվտանգության պետական կոմիտե	1					
22	ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	24					
23	ՀՀ ոստիկանություն	2	56740.6	30769.9			
24	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	48	11634.6	1565.5	80.4	7.9	
	ՀՀ մարզպետարաններ						
25	ՀՀ Արագածոտնի մարզպետարան						
26	ՀՀ Արարատի մարզպետարան	160					
27	ՀՀ Արմավիրի մարզպետարան	77					
28	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	168	10.2				
29	ՀՀ Լոռու մարզպետարան	83					
30	ՀՀ Կոտայքի մարզպետարան	89	19277.3	244.8	3.6	0.8	
31	ՀՀ Շիրակի մարզպետարան	977	14004.5	13943.9			
32	ՀՀ Սյունիքի մարզպետարան	38	566.6	566.6			
33	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	71					
34	ՀՀ Տավուշի մարզպետարան	63	7435.6			1885.6	
	Ընդամենը	2161	273662.0	59093.8	2585.0	2112.1	22.7